ԱՍՏԾՈ ՁԱՅՆԸ ՄԵԶ ԱԶԱՏՈՒՄ Է ՎԱԽԻՑ

3 ԹԱԳ. 19:1-21

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

In what ways does a "mountain-top" experience set us up for spiritual attack? Fear and discouragement.

ԲԱՆԱԼԻ ԲԱՌ

φοβέω -phobeō, Վախ, Fear

to put to flight by terrifying (to scare away)

to put to flight, to flee

phobialist.com

Ecclesiophobia- Fear of church.

Cyclophobia- Fear of bicycles.

Decidophobia- Fear of making decisions.

- **Մենք կարողենք գնալ կամ սիրուց ելնելով, կամել վախի ազդեցության տակ:**

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

(3 Թագ. 19:1-21)

18:46 Եւ Տիրոջ ձեռքը Եղիայի հետ էր. Եւ նա իր մէջքը պնդեց եւ վազեց Աքաաբի առաջից մինչեւ **Հեզրայէլ**: (25 miles)

1 Եւ Աքաաբը պատմեց **Հեզաբէլին** բոլոր ինչ որ Եղիան արել էր, եւ այն բոլորը որ ամեն մարգարէներին սրով սպանել էր: 2 Եւ Հեզաբէլը **պատգամավոր** ուղարկեց Եղիայի մօտ ասելով. Աստուածները այսպէս անեն եւ սորանից էլ աւելի անեն, եթէ որ **էգուց այս ժամին** քո անձը նորանցից մէկի անձի տեղ չդնեմ:

3 Եւ այս բանը տեսնելով վեր կացաւ գնաց իր **անձը ազատելու համար (he arose and ran for his life)**, եւ հասաւ Յուդայի Բերսաբէէն. Եւ իր պատանիին թողեց այնտեղ: 4 Բայց ինքը մէկ օրուայ ճանապարհ գնաց անապատումը եւ եկաւ մի գիհիի տակին նստեց եւ սրտանց **ուզեց որ մեռնէ** եւ ասեց. Արդէն բաւական է, ով Տէր, իմ հոգին առ. Որովհետեւ ես իմ հայրերիցը լաւ չեմ:

5 Եւ պառկեց եւ քնեց մի գիհիի տակ. Եւ ահա մէկ հրեշտակ նորան դիպաւ եւ ասեց նորան. Վեր կաց կեր: 6 Եւ Եղիան մտիկ տուաւ եւ ահա նորա գլխի կողմին մի քարի վերայ թխած նկանակ եւ մի կուժ ջուր կար. Եւ նա կերաւ եւ խմեց, եւ դարձեալ քնեց: 7 Եւ Տիրոջ հրեշտակը դարձեալ եկաւ եւ նորան դիպաւ եւ ասեց. Վեր կաց կեր, որովհետեւ ճանապարհդ շատ է քեզ համար: 8 Եւ նա վեր կացաւ եւ կերաւ ու խմեց եւ այն կերակուրի զօրութիւնով գնաց քառասուն օր եւ քառասուն գիշեր մինչեւ Աստուծոյ Քորեբ սարը:

I. ԻՆՉ Է ՎԱԽՆ ԻՐԵՆԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ:

*2 Եւ Հեզաբէլը **պատգամավոր** ուղարկեց Եղիայի մօտ ասելով. Աստուածները այսպէս անեն եւ սորանից էլ աւելի անեն, եթէ որ **էգուց այս ժամին** քո անձը նորանցից մէկի անձի տեղ չդնեմ:*

***Վախը Աստծուց չէ, այլ սատանայից* – այն ոգի է:**

Every time you feel fear in your life, it's a manifestation of the kingdom of darkness. I often say in my teachings that fear is the "master spirit." It's the spirit Satan uses to try to rule God's people and keep them from coming under the leadership of the true Master, Jesus Christ. ***Joyce Meyer***

2 Տիմ. 1:7 - որովհետեւ Աստուած մեզ <u>երկչոտութեան</u> ոգի չտուեց, այլ՝ զօրութեան, սիրո եւ զգաստութեան:

Եւ մի՛ վախեցէք նրանցից, որ մարմինն են սպանում, բայց հոգին սպանել չեն կարող. այլ դուք առաւել վախեցէ՛ք նրանից, ով կարող է գեհենի մէջ կորստեան մատնել հոգին եւ մարմինը: Մատթ. 10:28

"faith is believing what God says. Fear is believing what the devil says."

Do you hear what God says?

1. **Վախ բերում է տանջանք, ըստ 1 Հովհաննես 4:18 -** *Սիրո մէջ վախ չկա. այլ կատարեալ սէրը հեռացնում է վախը. որովհետեւ վախը **տանջանք ունի**. բայց նա որ վախենում է, **կատարեալ չէ սիրո մէջ:***
   - *Վախը առաջանում է սիրո բացակայությունից:*
2. **Վախը կարող է կործանել մեր հավատքը:** *Այն կարող է առաջացնել մեզ դեպրեսիա եւ անհանգստություն:*
   Fear paralyzes faith: *It can cause us depression and anxity*

   ***3** Եւ այս բանը **տեսնելով** վեր կացաւ գնաց (**փախավ**) իր **անձը ազատելու համար**, եւ հասավ Յուդայի Բերսաբէէն. Եւ իր պատանիին թողեց այնտեղ:*

   *2 Կոր. 5:7 - Որովհետեւ հաւատքով ենք գնում, եւ ոչ թէ **երեւոյթով:***

2. **Վախ մեկուսացնում է մարդուն Աստծուց:**
   Fear isolates people from God

   4** Բայց ինքը **մէկ օրուա ճանապարհ գնաց անապատ** եւ եկաւ մի գիհիի տակին նստեց եւ սրտանց ուզեց որ մեռնէ... **այս մեկուսացումը տարբեր էր Քեռիթից:

3. **Վախը կառաջացնի ինքնասպանության մտքեր:**
   Fear will cause sucidal thoughts

   4** Բայց ինքը մէկ օրուայ ճանապարհ գնաց անապատումը եւ եկաւ մի գիհիի տակին նստեց եւ սրտանց **ուզեց որ մեռնէ...

4. **Վախը կստիպի ձեզ զգալ անարժեք:**
   Fear will make you feel worthless

*4 Արդէն բաւական է, ով Տէր, իմ հոգին առ. Որովհետեւ **ես իմ հայրերիցը լաւ չեմ**:*

II. ԵՐԲ ԱՍՏՎԱԾ ԽՈՍՈՒՄ Է, ՎԱԽՆ ՀԵՌԱՆՈՒՄ Է:

*8 Եւ նա վեր կացաւ եւ կերաւ ու խմեց եւ այն կերակուրի զօրութիւնով գնաց քառասուն օր եւ քառասուն գիշեր մինչեւ Աստուծոյ **Քորեբ սարը:***

*9 Եւ այնտեղ մտաւ մի **քարայրի մէջ եւ այնտեղ օթեւանեց** (առանձին սենյակ), եւ ահա **Տիրոջ խօսքն եղաւ** իրան եւ նորան ասեց. **Ի՞նչ ունես այստեղ, Եղիա:** 10 Եւ նա ասեց. Ես մեծ նախանձաւորութիւն ունեցա Զօրաց Տէր Աստուծո համար, որ Իսրայէլի որդիները քո ուխտը թողել են, քո սեղանները քանդել են, եւ քո մարգարէներին սրով սպանել են. Եւ մենակ ես եմ մնացել, եւ իմ հոգին որոնում են սպանելու: 11 Եւ նա ասեց. Դուրս եկ եւ կանգնիր սարի վերա Տիրոջ առաջին: Եւ ահա Տէրը անցնում էր.*

*(1) Եւ մի մեծ եւ զօրաւոր **հողմ** պատառեց սարերը եւ կոտրատեց ապառաժները Տիրոջ առաջին. Բայց Տէրն այն հողմի մէջ չէր: (2) Եւ հողմից հետո **երկրաշարժ** եղաւ, բայց Տէրը երկրաշարժի մէջ չէր: (3) 12 Եւ երկրաշարժից հետո **կրակ**, բայց Տէրը կրակի մէջ չէր. (4) **Եւ կրակից հետո մի մեղմ ու բարակ ձայն:***

*13 Եւ եղաւ երբոր Եղիան լսեց այն, իր երեսը ծածկեց իր վերարկուով եւ դուրս եկաւ ու կանգնեց քարայրի դռանը, եւ ահա մի **ձայն** եկաւ նորան եւ ասեց. **Այստեղ ի՞նչ ունես, Եղիա:** 14 Եւ նա ասեց. Մեծ նախանձաւորութիւն ունեցա Զօրաց Տէր Աստուծո համար, որ Իսրայէլի որդիքը քո ուխտը թողել են, քո սեղանները քանդել են, եւ քո մարգարէներին սրով սպանել են, եւ մենակ ես եմ մնացել, եւ իմ հոգին էլ որոնում են սպանելու:*

III. ԱՍՏԾՈ ՁԱՅՆԸ ՈՉ ՄԻԱՅՆ ՎԱՆՈՒՄ Է ՎԱԽԸ ԱՅԼ ՏԱԼԻՍ Է ՈՒՂՈՒԹՅՈՒՆ ԵՒ ՏԵՍԻԼՔ:

15 Եւ Տէրն ասեց նորան. Ետ դարձիր գնա քո ճանապարհով անապատով Դամասկոս, եւ երբոր գաս՝

(1) Ազայէլին Ասորիների վերայ թագաւոր օծիր: 16 (not a believer)

(2) Եւ Նամեսսիի որդի Յէուին էլ թագաւոր օծիր Իսրայէլի վերայ,

(3) եւ Սափատի որդի Եղիսէին էլ մարգարէ օծիր քո տեղը:

- *17 Եւ կլինի որ Ազայէլի սուրիցն ազատուողին Յէուն կմեռցնէ, եւ Յէուի սուրիցն ազատուողին Եղիսէն կմեռցնէ: 18 Եւ ինձ համար թողել եմ Իսրայէլի մէջ եօթը հազար հոգի բոլորն էլ այնպիսի մարդիկ որ ծունկ չծռեցին Բահաղին եւ բոլորն էլ բերանով նորան չհամբուրեցին:*

ԱՄՓՈՓՈՒՄ

Հռ. 8:35,38-39 - Ապա ո՞վ կ'բաժանէ մեզ Քրիստոսի սէրից. տառապա՞նք, թէ նեղութի՞ւն, թէ հալածա՞նք, թէ սո՞վ, թէ մերկութի՞ւն, թէ վտա՞նգ, թէ սո՞ւր:

38 Որովհետեւ հաստատ գիտեմ, որ ոչ մահ, ոչ կեանք, ոչ հրեշտակներ, ոչ իշխանութիւններ, ոչ զօրութիւններ, ոչ ներկայ բաներ, ոչ գալու բաներ, 39 Եւ ոչ բարձրութիւն, ոչ խորութիւն, եւ ոչ մի ուրիշ ստեղծուած բան կարող է մեզ բաժանել Աստուծոյ սէրից՝ որ **մեր Տէր Յիսուս Քրիստոսումն է:**

Աստված սեր է, սերը Քրիստոսի մեջ է, իսկ մենք Հիսուս Քրիստոսում: կատարյալ սիրո մեջ վախ չկա: Ի՞նչպես կարող է Աստծո մեջ վախ լինել: